

Արձանագրություն №8/2014-2015

Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի՝ 2015թ. հունիսի 25-ին տեղի ունեցած թիվ 8 նիստի

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 88 (ութսունութ) անդամներից 66-ը (վաթսունվեց):
Նիստը նախագահում էր ռեկտոր Ա. Ն. Սիմոնյանը:

Ռեկտոր Ա. Ն. Սիմոնյանը, բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը.

1. **Շնորհավորանքներ ԵՊՀ տնտեսագիտության տեսության ամբիոնի պատվավոր վարիչ Գրիգոր Ղարիբյանի ծննդյան հոբելյանական տարեդարձի կապակցությամբ:**
2. **Պրոֆեսորի, դոցենտի գիտական կոչումների շնորհում** (զեկ.՝ գիտական խորհրդի մրցութային հանձնաժողովների նախագահներ Գ. Ն. Պետրոսյան, Ա. Ա. Սահակյան):
3. **Տեղեկատվություն 2015-16 ուստարվա առկա ուսուցմամբ բակալավրիատի ընդունելության իրավիճակի մասին:** (Զեկ.՝ պրոռեկտոր Ա. Կ. Գրիգորյան)
4. **Գիտական զեկուցում. <<Գենետիկայի արդի նվաճումները և հեռանկարները>>** (զեկ. գենետիկայի և բջջաբանության ամբիոնի վարիչ, պրոֆ. Ռ. Մ. Հարությունյան):

5. Ընթացիկ հարցեր

5.1 ԵՊՀ էկոլոգիական քիմիայի ամբիոնը լուծարելու մասին:

5.2 ԵՊՀ արաբագիտության ամբիոնի կողմից հրատարակվող <<Արաբագիտության հարցեր>> ժողովածուն ատենախոսությունների հիմնական արդյունքների և դրույթների հրատարակման համար ընդունելի պարբերական գիտական հրատարակությունների ցուցակում ընդգրկելու հարցով ԲՈՀ-ին դիմելու մասին:

5.3 <<Տնտեսագիտության ժամանակակից հիմնահարցեր-3>> ուսանողների, ասպիրանտների և երիտասարդ գիտնականների միջազգային 3-րդ գիտաժողովի նյութերի ժողովածուն հրատարակության երաշխավորելու և այն ԲՈՀ-ի՝ ատենախոսությունների հիմնական արդյունքների և դրույթների հրատարակման համար ընդունելի գիտական հրատարակությունների ցուցակում ընդգրկելու հարցում ՀՀ ԲՈՀ-ին միջնորդելու մասին:

5.4 Իսպանացի գրող, հրապարակախոս, Հայոց Ցեղասպանությանը նվիրված գրքերի հեղինակ Գոնսալո Գուարչին ԵՊՀ պատվավոր դոկտորի կոչում շնորհելու մասին:

Գիտխորհրդի անդամների կողմից օրակարգի համար այլ հարց չառաջարկվեց և մասնակիցների բաց քվեարկությամբ ընդունվեց նիստի օրակարգը:

Ռեկտոր Ա. Ն. Սիմոնյանը ԵՊՀ ողջ կոլեկտիվի և ուսանողության անունից շնորհավորեց Գրիգոր Ղարիբյանին նշանակալի հոբելյանի առթիվ, բարեմաղթեց քաջառողջություն, ուժ և եռանդ ստեղծագործական նորանոր հաջողությունների ականատեսը լինելու համար: Նա իր խոսքում ասաց, որ պրոֆ. Ղարիբյանը իր երկարամյա բարեխիղճ աշխատանքով, իր

մարդկային, բարի ու համեստ խառնվածքով վայելում է համալսարանականների և ընդհանրապես մտավորականների մեծ սերն ու հարգանքը: Անդրադառնալով Գ. Ղարիբյանի գործունեությանը՝ Ա. Միմոնյանը, ինչպես նաև պրոռեկտոր Գ. Գևորգյանը, տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկան Հ. Սարգսյանը և գիտխորհրդի այլ անդամներ, մասնավորապես նշեցին, որ Պրոֆ. Գ.Ղարիբյանը մեծ ավանդ ունի նաև համալսարանի, տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի ուսումնագիտական աշխատանքների կազմակերպման ու դեկավարման գործում: 1976-78 թվականներին նա եղել է ԵՊՀ կուսակցական կոմիտեի երկրորդ քարտուղարը՝ բազմաթիվ կնճռոտ հարցերի արդարացի լուծման գործում դրսևորելով սկզբունքային և հայեցի մոտեցում: 1987թ.-ից մինչև 1991թ.-ը պրոֆ. Ղարիբյանը եղել է ԵՊՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր՝ իր մասնակցությունն ունենալով փիլիսոփայության և ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետների կայացման և մի շարք նոր մասնագիտությունների ու ամբիոնների բացման գործում: Ավելի քան 20 տարի է, ինչ վաստակաշատ գիտնականը ԵՊՀ տնտեսագիտության գծով գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհրդի նախագահն է: Գ.Ղարիբյանի գործուն և հետևողական ջանքերի շնորհիվ 1984թ.-ին տնտեսագիտական կիբեռնետիկայի ֆակուլտետը Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտից տեղափոխվեց համալսարան, և հետագայում, որպես ֆակուլտետի դեկան, Գ. Ղարիբյանն ամեն ինչ արեց՝ այն դարձնելու ժամանակակից միջազգային ամենաբարձր պահանջները բավարարող ֆակուլտետ:

2. Լսեցին. – **Պրոֆեսորի և դոցենտի կոչում շնորհելու մասին:** Հումանիտար մասնագիտությունների գծով մրցութային հանձնաժողովի նախագահ Գ. Հ. Պետրոսյանը և բնագիտական մասնագիտությունների գծով մրցութային հանձնաժողովի նախագահ Ա. Ա. Սահակյանը ներկայացրեցին պրոֆեսորի և դոցենտի կոչման հավակնորդների մասին ամփոփ տվյալներ:

Պրոֆեսորի կոչման հավակնորդներն էին.

	Ազգանուն, անուն, հայրանուն	Աշխատանքային վայրը, պաշտոնը
1.	Հարությունյան Վաչագան Վիկտորի	Տեսական ֆիզիկայի ամբիոնի դոցենտ
2.	Հակոբյան Հրաչյա Ռաֆիկի	Ֆիզիկական դաստիարակության և սպորտի ամբիոնի դոցենտ

Դոցենտի կոչման հավակնորդներն էին.

	Ազգանուն, անուն, հայրանուն	Աշխատանքային վայրը, պաշտոնը
1.	Մանասյան Անահիտ Արտյոմի	Մահմանադրական իրավունքի ամբիոնի ասիստենտ
2.	Զարչյան Թադևոս Կառլենի	Իրանագիտության ամբիոնի ասիստենտ
3.	Կարապետյան Մարինա Ռոբերտի	Անգլերեն լեզվի թիվ 2 ամբիոնի ասիստենտ
4.	Մկրյան Նաիրա Ռաուլի	Անգլիական բանասիրության ամբիոնի ասիստենտ
5.	Զալինյան Գայանե Գևորգիի	Բջջաբանության և զենետիկայի ամբիոնի ասիստենտ
6.	Շահագիզյան Իրեն Վաչագանի	Բուսաբանության և սնկաբանության ամբիոնի ասիստենտ
7.	Վարդումյան Էդմոնդ Էդիկի	Ակտուարական մաթեմատիկայի և ռիսկերի կառավարման ամբիոնի ասիստենտ

8	Պողոսյան Լիլիթ Աշոտի	Հայ եկեղեցու պատմության և եկեղեցաբանության ամբիոնի ասիստենտ
9	Սեմիրջյան Ալվարդ Հովհաննեսի	Գրականության տեսության և գրաքննադատության ամբիոնի ասիստենտ
10	Գինոսյան Նաիրա Լյովայի	Թյուրքագիտության ամբիոնի ասիստենտ
11	Զոլյան Լիլիթ Ռոբերտի	Ռուսաց լեզվի /հումանիտար ֆակուլտ. համար/ ամբիոնի ասիստենտ
12	Մարտիրյան Նաիրա Իգնատիոսի	Ռուսաց լեզվաբանության, տիպաբանության և հաղորդակցման տեսության ամբիոնի ասիստենտ
13	Գրիգորյան Վահագն Վարազդատի	Սերվիսի ամբիոնի ասիստենտ

Ռեկտոր Ա. Հ. Միմոնյանի առաջարկով կազմվեց հաշվիչ հանձնաժողով՝ հետևյալ անդամներով՝

1. Ավագյան Արծրուն (նախագահ)
2. Առաքելյան Սամվել
3. Աղայան Ժասմեն
4. Թադևոսյան Ժաննա
5. Հարությունյան Արմենակ

Կազմակերպվեց փակ, գաղտնի քվեարկություն, որին մասնակցեցին նիստին ներկա 66 անդամները: Հաշվիչ հանձնաժողովի նախագահ Ա. Ավագյանը ներկայացրեց քվեարկության արդյունքները.

h/h	Ազգանուն, անուն, հայրանուն	կողմ	դեմ	անվավեր
1.	Հարությունյան Վաչագան Վիկտորի	65	1	0
2.	Հակոբյան Հրայրա Ռաֆիկի	61	5	0
3.	Մանասյան Անահիտ Արտյոմի	61	5	0
4.	Զարչյան Թադևոս Կառլենի	59	7	0
5.	Կարապետյան Մարինա Ռոբերտի	64	2	0
6.	Մկրյան Նաիրա Ռաուլի	65	1	0
7.	Զալինյան Գայանե Գեորգիի	65	1	0
8.	Շահազիզյան Իրեն Վաչագանի	64	2	0
9.	Վարդումյան Էդմոնդ Էդիկի	64	2	0
10.	Պողոսյան Լիլիթ Աշոտի	66	0	0
11.	Սեմիրջյան Ալվարդ Հովհաննեսի	63	3	0
12.	Գինոսյան Նաիրա Լյովայի	65	1	0
13.	Զոլյան Լիլիթ Ռոբերտի	65	1	0
14.	Մարտիրյան Նաիրա Իգնատիոսի	64	2	0
15.	Գրիգորյան Վահագն Վարազդատի	64	2	0

Որոշեցին. – 2.1 Հաստատել փակ, գաղտնի քվեարկության արդյունքները:

2.2 Վերոնշյալ հավակնորդներին շնորհել պրոֆեսորի և դոցենտի զիտական կոչումներ:

2.3 Տասնհինգ օրվա ընթացքում նրանց գործերը ներկայացնել ՀՀ ԲՈՀ՝ շնորհված գիտական կոչումները հաստատելու և դիպլոմներ տալու համար

3 **Լսեցին.** – **Գիտական զեկուցում.** <<Գենետիկայի արդի նվաճումները և հեռանկարները>>: Գենետիկայի և բջջաբանության ամբիոնի վարիչ, պրոֆ. Ռ. Մ. Հարությունյանը ներկայացրեց գենետիկայի արդի մեթոդների կիրառումը պատմության, բժշկության, մարդաբանության, սոցիոլոգիայի և հոգեբանության, դատաբժշկական փորձաքննության, սննդի և միջավայրի աղտոտվածության մշտադիտարկման, բնագավառներում: Նա պատմեց Հայաստանում էկոգենետիկական ուսումնասիրությունների և կիրառվող թեստ-օբյեկտների մասին: Զեկուցման ընթացքում Ռ. Հարությունյանը ներկայացրեց, ինչպես գենետիկայի և բջջաբանության ամբիոնում իրականացվող բազմաբնույթ մոլեկուլային-գենետիկական աշխատանքներն ու արտասահմանյան տարբեր գիտահետազոտական ինստիտուտների հետ համագործակցության արդյունքները, այնպես էլ ծանոթացրեց աշխարհում ժամանակակից գենետիկայի նվաճումների և Հայաստանում դրանք կիրառելու հեռանկարների հետ:)

Որոշեցին. – Ռ.Մ. Հարությունյանի զեկուցումն ընդունել ի գիտություն:

4. Ընթացիկ հարցեր.

4.1 **Լսեցին.** - ԵՊՀ էկոլոգիական քիմիայի ամբիոնը լուծարելու մասին: Դեղագիտության և քիմիայի ֆակուլտետի դեկան Տ. Ղոչիկյանը հայտնեց, որ խնդիրը հանգամանալից քննարկվել է ֆակուլտետի ստորաբաժանումներում և գիտական խորհրդի նիստում, և ելնելով այն հանգամանքից, որ երեք տարի էկոլոգիական քիմիայի մասնագիտության գծով արձանագրվել է դիմորդների բացակայություն և ըստ այդմ ընդունելությունը կասեցվել է, ֆակուլտետի գիտական խորհուրդը միջնորդում է լուծարել էկոլոգիական քիմիայի ամբիոնը:

Որոշեցին. –միջնորդել ԵՊՀ հոգաբարձուների խորհրդին՝ լուծարելու էկոլոգիական քիմիայի ամբիոնը:

4.2 **Լսեցին.** - ԵՊՀ արաբագիտության ամբիոնի կողմից հրատարակվող <<Արաբագիտության հարցեր>> ժողովածուն ատենախոսությունների հիմնական արդյունքների և դրույթների հրատարակման համար ընդունելի պարբերական գիտական հրատարակությունների ցուցակում ընդգրկելու հարցով ԲՈՀ-ին դիմելու մասին: Ռեկտոր Ա. Հ. Սիմոնյանը ներկայացրեց արևելագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի միջնորդությունը հարցի առնչությամբ: Հարցեր չհչեցին:

Որոշեցին. – Միջնորդել ԲՈՀ-ին՝ ԵՊՀ արաբագիտության ամբիոնի կողմից հրատարակվող <<Արաբագիտության հարցեր>> ժողովածուն ընդգրկելու ատենախոսությունների հիմնական արդյունքների և դրույթների հրատարակման համար ընդունելի պարբերական գիտական հրատարակությունների ցուցակում:

4.3 **Լսեցին** - <<Տնտեսագիտության ժամանակակից հիմնահարցեր-3>> ուսանողների, ասպիրանտների և երիտասարդ գիտնականների միջազգային 3-րդ գիտաժողովի նյութերի ժողովածուն հրատարակության երաշխավորելու և այն ԲՈՀ-ի՝ ատենախոսությունների հիմնական արդյունքների և դրույթների հրատարակման համար ընդունելի գիտական հրատարակությունների ցուցակում ընդգրկելու հարցում ՀՀ ԲՈՀ-ին

միջնորդելու մասին: Ռեկտոր Ա. Հ. Միմոնյանը ներկայացրեց արևելագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի միջնորդությունը հարցի առնչությամբ: Հարցեր չհչեցին:

Որոշեցին. – Միջնորդել ԲՈՀ-ին՝ «Տնտեսագիտության ժամանակակից հիմնահարցեր-3» ուսանողների, ասպիրանտների և երիտասարդ գիտնականների միջազգային 3-րդ գիտաժողովի նյութերի ժողովածուն հրատարակության երաշխավորելու և այն ընդգրկելու ԲՈՀ-ի՝ ատենախոսությունների հիմնական արդյունքների և դրույթների հրատարակման համար ընդունելի գիտական հրատարակությունների ցուցակում:

4.4 Լսեցին. – Իսպանացի գրող, հրապարակախոս, Հայոց Ցեղասպանությանը նվիրված գրքերի հեղինակ Գոնսալո Գուարչին ԵՊՀ պատվավոր դոկտորի կոչում շնորհելու մասին: Ռեկտոր Ա. Միմոնյանը հակիրճ ներկայացրեց իսպանացի հանրաճանաչ գրող, ճարտարապետ և քաղաքաշինարար Գոնսալո Հ. Գուարչի կենսագրությունը՝ շեշտելով հատկապես ճնշված ու ցեղասպանության ենթարկված ժողովուրդների ողբերգությունների վերաբերյալ նրա հեղինակած հարուստ գրական ժառանգության մասին: Ռեկտորը նշեց, որ Գ. Գուարչին իր խոր ցասումն արտահայտել է նաև Օսմանյան կայսրությունում թուրքական կառավարության իրագործած հրեշավոր ծրագրի՝ հայ ժողովրդի ցեղասպանության հանդեպ: Նա հրատարակել է եռագրություն բաղկացած՝ «Հայկական տոհմաճառ», «Հայոց կտակ» և «Սպիտակ լեռը» մասերից: Գուարչը լավ է ուսումնասիրել հայկական հարցը, Եղեռնի ընթացքը, Եվրոպայի լռությունը: 2013 թ. ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը պարգևատրել է նրան «Մովսես Խորենացի» մեդալով Գոնսալո Գուարչը հսկայածավալ աշխատանք է կատարել, փաստեր հավաքել իր երեք գեղարվեստափաստագրական վեպերի համար, հաջողությամբ կատարել այդ դժվարին գործը՝ հաստատելով այն միտքը, որ ոճրի ու նախճիրի դատապարտումը միայն հայի գործը չէ, այլ ցանկացած բանական մարդու՝ ինչ ազգի էլ պատկանելիս լինի նա: Ուստի, նշեց ռեկտոր Ա. Միմոնյանը, իսպանացի գրողի անձնվեր գործունեությունը արժանի է մեծարման, բարձրագույն հարգանքի ու Երևանի Պետական Համալսարանի կողմից արժանանալու գիտության պատվավոր դոկտորի կոչման:

Որոշեցին. – Գոնսալո Գուարչին շնորհել ԵՊՀ պատվավոր դոկտորի կոչում:

Գիտական խորհրդի նախագահ՝

Ա. Հ. Միմոնյան

Գիտական խորհրդի քարտուղար՝

Մ. Ա. Մողմոնյան

02.07.2015թ.